. ՏԱՐՈՆԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

(պատմություն և գաղափարախոսություն)

. ՀԱՅԿ ԱՍԱՏՐՅԱՆ

(կենսագրական ակնարկ)

Հրատարակիչ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Երեւան 2002 թ.

Աշխատասիրությամբ՝ ՄՈՒՇԵՂ ԼԱԼԱՅԱՆԻ

«Մեռնել, բայց չտեսնել Հայրենիքը պարտված: Հաղթանակից կյանքի բարոյական կանոն հորինել, պարտությունը ստեղծագործաբար ողբերգել եւ դրանից մեծագործումի նոր ուժ եւ խանդ երկնել:

Այդպես չէ՞ր երբեմն հայը:

Ասում ենք՝ այդպես էր, ուզում ենք էլի՛ այդպես լինի եւ քարոզում ենք ՏԱՐՈՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»:

ՀԱՅԿ ԱՍԱՏՐՅԱՆ

ՏԱՐՈՆԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Ա) ՏԱՐՈՆԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Հ.Յ.Դ-ից Նժդեհի եւ Հայկ Ասատրյանի հեռացումով՝ Ցեղակրոն շարժումը սկսեց տեղատվություն ապրել: Ամերիկայի Հ.Յ.Դ. Ցեղակրոն Ուխտերը, որոնք արդեն կուսակցականացվել էին, այլեւս չէին կարող հանդես գալ որպես համահայկական կառույցի հիմք: Ուստի, անհրաժեշտություն կար համագաղութային մի նոր շարժումի:

Միաժամանակ, Ցեղակրոն ուսմունքը չէր պատասխանում ոգու եւ արարչագործության հետ կապված մի շարք հարցերի, եւ կարիք կար տալու դրանց հիմնավորումները: Ցեղակրոնության նկատմամբ անտարբեր կամ անբարյացկամ վերաբերմունք ուներ Հայ եկեղեցին, որն ազդեցիկ ուժ էր գաղութահայ կյանքում. թելադրող այս իրականությունը պետք էր հաշվի առնել: Հետեւաբար, անհրաժեշտ էր ամբողջացնել Ցեղային աշխարհայեցողությունը, այն միավորիչ դարձնել հայության բոլոր հատվածների, այդ թվում՝ եւ Հայ եկեղեցու համար (1):

Նոր շարժման նախաձեռնող կորիզը հիմնականում եղավ Բուլղարիայի Ցեղակրոն կազմակերպությունը՝ ի դեմս Գ. Նժդեհի, Հ. Ասատրյանի, Ն. Աստվածատուրյանի, որոնք 1937թ.-ից Պլովդիվում հրատարակում էին **«Ռազմիկ»** թերթը (2), որի էջերում էլ այդ թվականին սկսեցին լույս տեսնել առանձին հրապարակումներ Տարոնականության վերաբերյալ:

Շարժման հենարանը հանդիսացավ Տարոն-Տուրուբերանի հայրենակցական միությունը (հիմնվել է 1917թ.-ին, ԱՄՆ-ում), որը լինելով առավել հզորը համանման միությունների մեջ, գաղութներում հանդիսանում էր Ցեղակրոն շարժման ամուր հենարաններից մեկը: Միությունը որդեգրել եւ որպես հավատո հանգանակ, իր զինանշանի վրա արձանագրել էր դարերի խորքից քաղված Մամիկոնեից Ուխտը՝ *«ՔԱՋՈՒԹԵԱՄԲ ՄԵՌ-ՑՈՒՔ Ի ՎԵՐԱՅ ԱՇԽԱՐՀԻՍ ՄԵՐ ԵՒ Ի ՎԵՐԱՅ ԱԶԳԻՍ ՄԵՐ, ԵՒ ՄԻ ՏԵՍՑԵՆ ԱՉՔ ՄԵՐ ԿՈԽԱՆ ՈՏԻՑ ՊՂՇԱԼԻՑ ԼԵԱԼ ՁՍՐԲԱՐԱՆՍ ՄԵՐ»* (3): Սրանով միությունն արդեն հաստատել, որ ինքը սովորական հայրենակցական միություն չէ, այլ ավելի «քաղաքական բնույթ կրող հայրենասիրական կազմակերպություն մը, հին ասպետական ուխտերու տիպարով» (4):

Եվ ահա՛, 1938 թ. ապրիլին, Սոֆիայում, Տարոն-Տուրուբերանի հայրենակցական միությունը (Տ. Տ. Հ. Մ.) սկսեց լույս ընծայել **«Տարոնի**

Արծիվ» ամսաթերթը՝ Հայկ Ասատրյանի խմբագրությամբ (պատասխանատու տնօրեն՝ Ներսես Աստվածատուրյան), որով ավետվեց տարոնական ոգու վերածնունդը եւ սկիզբը դրվեց Տարոնական շարժման:

Որո՞նք էին շարժման նախադրյալները եւ ի՞նչ նպատակներ ունեին այն նախաձեռնողները:

Դրանք հիմնականում նույնն էին, ինչ Ցեղակրոն շարժման դեպքում:

Հայ ճակատագրի տագնապն էր ծնունդ տալիս Տարոնական հոգեվերանորոգչական շարժմանը, որի ղեկավարները ելնում էին այն ճշմարտությունից, թե փոփոխելի է ամեն ճակատագիր, եթե կա բարոյական վերանորոգում:

Դա մի ժամանակ էր, երբ ներքին պառակտիչ պայքարները, փոխադարձ անհանդուրժողականությունն ու ատելությունը գաղթահայությանը կանգնեցրել էին դժոխքի շեմին: Եվ ժամանակի հրամայականն էր՝ բնականորեն վերջ տալ հայության քաղաքական հոսանքների, կրոնական հարանվանությունների, անձնանպատակ խմբերի միջեւ մղվող ներքին հայակործան պայքարներին:

Դա մի ժամանակ էր, երբ աշխարհում ազգերը վերաքննում էին սեփական արժեքները, որոնում իրենց պարտությունների եւ դժբախտությունների պատճառները, սպառազինվում հին, բայց մշտապես նոր ու պատմականորեն արդարացված հավիտենական արժեքներով:

Այդ նույն ժամանակի պահանջն էր եւ Տարոնական շարժումը, որը եկավ վերածնելու ու վերակոչելու Ցեղի հավիտենական առաքինությունները, հոգեբարոյական հեղաշրջում անելու օրվա ճահճացած, դատապարտվածության զգացումով ապրող եւ այլասերումի ենթակա հայության մեջ:

«Դա բարոյական հեղաշրջում է, որով կրնա իր ոգին ուժաստանի վերածել հայ ռազմիկը, իր երեւակայությանը ստեղծագործ թափ ու թեւ տալ հայ մտավորականը, իր քաղաքական գործի մեջ նպատակ, հանճար եւ սրբություն դնել հայրենապաշտ հայ կուսակցականը». գրում էր «Տարոնի Արծիվը» (5):

Հայության վերածննդի ճանապարհը տեսնելով նրա ցեղայնացման՝ սեփական ցեղային արժեքների վերականգնման, դրանց վերարծարծման ու վերապրումի մեջ, Տարոնական շարժման առաջնորդները հայտարարում էին. «Ցեղ էինք եւ կցեղայնանանք: Ցեղ էինք եւ հզոր էինք. կցեղայնանանք, որպեսզի կրկին հզորանանք» (6):

Համոզված, որ առանց Հայրենիքի տարագիր հայությունը, ի վերջո, դատապարտված է կորստյան, Տ. Տ. Հ. Մ.-ն իր կողմնորոշումը հռչակեց Տարոնականությունը՝ այն հաստատուն հավատով, որ «Տարո-

նականության ոգին փրկարար դեր պիտի կատարե հայությունը իր ներկա անկերպարան վիճակեն դուրս բերելու եւ իր պատմական Հայրենիքին տեր դարձնելու համար» (7):

Քաջ հասկանալով պատմության տրամաբանությունը եւ կանխազգալով պատերազմը՝ Տարոնական շարժման առաջնորդները նպատակ ունեցան հայությանը գալիք արհավիրքին հոգեբանորեն նախապատրաստելը, նոր բարոյականով սպառազինելը (8):

Քաղաքական շարժում կամ նոր կուսակցություն ստեղծելու փորձ չէր, որ ձեռնարկում էին Տարոնական շարժման հիմնադիրներն ու Տ. Տ. Հ. Մ.-ը: Նրանց նպատակն էր՝ պատրաստել Ազգի եւ Հայրենիքի համար անշահախնդիր պայքարողներ ու նրանցով մատակարարել, ոգեպես սնել եղած կուսակցությունները:

Հիմնելով Տարոնականությունը՝ շարժման գաղափարախոսները, միաժամանակ, նպատակ ունեին կառուցելու հայկականորեն հիմնավորված աշխարհայեցողություն, ազգային ընդհանուր տեսություն (Եկեղեցու աստվածաբանական աշխարհայեցողությունը, նա՛խ, ուներ տարանուն շերտավորումներ եւ այդպիսով միացուցիչ ուժ չէր. հետո, նա ընդունակ չէր քայլելու կյանքի պատմական զարգացման հետ ու իրականացնելու հայության բարոյական վերազինումը):

Հենց սկզբից էլ փշոտ եղավ Տարոնականության ճամփան: Հայության՝ հոգով տկար, անցավոր ներկայով բավարարվող, Ցեղի էությանն անծանոթ տարրերը պայքար ծավալեցին Տարոնական շարժման դեմ՝ մեկ ամբաստանելով նրան որպես քաղաքական նոր կուսակցություն ստեղծելու փորձ, որն իբր պիտի հակադրվեր մնացած հայկական կուսակցություններին, մեկ՝ որպես տարոնցի հայերի հատվածական շարժում (9) եւ այլն: Մասնավորապես, Ս. Վրացյանն իր կողմից խմբագրվող «Վեմ» հանդեսում խիստ բացասական արտահայտվեց Տարոնականության հասցեին, միաժամանակ՝ շարժմանը վերագրելով անհիմն մեղադրանքներ (10): Դրանց հերքումով՝ Հայկ Ասատրյանը «Տարոնի Արծիվում» հանդես եկավ «Հարկադրական մի պատասխանով» (11):

Ինչեւէ, պայթեց երկրորդ աշխարհամարտը եւ գաղթահայությունը մնաց առանց հոգեբանական նախապատրաստման: 1939 թ.-ին Դիտրոյտում գումարված Տ. Տ. Հ. Մ.-ի պատգամավորական ժողովն իր օրակարգում քննեց Տարոնականությունը: Ժողովը, որ ընդամենը մեկ տարի առաջ, էքրըն Օհայոյի մեջ հայտարարում էր, թե «կշնորհավորե եւ քաջալերական խոսք կուղղե «Տարօնի Արծիվ»-ին՝ իր ուղղության համար» (12), արեց տրամագծորեն հակառակ հայտարարություն. «Տարօնի Արծիվ»-ի մեջ պետք է լույս տեսնեն այնպիսի գրություններ, որոնք կվերաբերին Տարոնի աշխարհին... Տեսական բնույթ ունեցող այն գրությունները,

որոնք կնգտին նոր վարդապետություն մը հաստատել, ինչ անունի ներքեւ ալ ըլլան, պետք չէ որ մուտք գործեն մեր պատմության մեջ» (13):

Այդպիսով, Տարոնական համահայկական ուսմունքը պիտի փոխարինվեր տարոնցիական մանրապատումներով եւ, որ ամենացավալին է, չէր հանդուրժվում ո՛չ մի ազգային ուսմունք, որի կարիքը այնքա՜ն ուներ (եւ ունի) հայությունը: Հասկանալի է նաեւ, որ Տ. Տ. Հ. Մ.-ն այդ հայտարարությունը անում էր ոչ այնքան սեփական ցանկությամբ, որքան այլոց պարտադրանքով կամ հրահրմամբ:

Միաժամանակ, «Տարոնի Արծիվ»-ի հրատարակությունը Սոֆիայից փոխադրվեց Նյու Յորք. այստեղ նա վերածվեց ընդամենը տարոնցի հայերի պարբերաթերթի:

Այսպիսով, Տարոնական շարժումը ձախողվեց՝ ապրելով ժամանակավոր ողբերգանքի տաժանքը: Սակայն, շարժման առաջնորդները համոզված էին, որ առանց ողբերգականության՝ չկա՛ հաղթանակ: Նրանք վստահ էին, որ իրենց դավանած ուսմունքի տապալումը ողբերգություն է՝ հաղթանակի՛ց առաջ, որ Տարոնականության Գողգոթան ժամանակավոր է, քանզի ճշմարտությունները հաղթանակում են թաղվելուց հետո հարություն առնելով:

Եվ իրավամբ, Տարոնականության տված ճշմարտությունները, 30-ական թվականների վերջին թաղվելուց հետո, այսօր հարություն են առնում:

Բ) ՏԱՐՈՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«Մենք տեսանք գաղութի բարոյական զարհուրանքը, հայրենազուրկ մարդու հոգու չարչարանքով դիմեցինք մեր հայրերու աստվածների խորհուրդին եւ գտանք տարոնականությունը»:

ՑԵՂԸ ԵՎ ՀԱՅՐԵՆԻՔԸ՝ ՏԱՐՈՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱՅԵՑՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՔ

Տարոնական աշխարհայեցողության էաբանական խորքը Ցեղն է՝ տեսակը, որը կենսաբանական (բնական) ըմբռնում է եւ ո՛չ պատմական՝ ինչպես ազգությունը, կամ ընկերային՝ ինչպես ժողովուրդը: Ցեղի (տեսակի) հավերժացումը Տարոնականության սահմանած ընդհանուր գերնպատակն է, իսկ Ցեղի կենսաբանական որակները՝ Արյունը եւ Ոգին, որոնք ժառանգականության օրենքով շարունակելի են, կազմում են Տարոնական կենսահայեցողության շաղախը: Ցեղը արյան (նյութի) եւ ոգու՝ մարմնականի ու հոգեկանի բնական ներդաշնակությունն է, եւ Տարոնականությունը ցեղի մարմնական ու հոգեկան հատկանիշների (արյան եւ ոգու) փոխադարձ ազդեցությունն ընդունում է որպես բնածին ճշմարտություն: «Որոշ որակի արյունը կարող է միայն ծնունդ տալ որոշ որակի ոգու: Ոգու եւ ոգու միջեւ այնքա՛ն տարբերություն կա, որքան՝ արյունի եւ արյունի: Տարբեր են ո՛չ միայն սպիտակների եւ դեղինների մարմնական հատկանիշները, այլեւ՝ նրանց հոգեգծությունը»,- պարզաբանում է Հայկ Ասատրյանը (14): Այսպիսով, Տարոնականությունը հաստատում է ցեղի ոգու (որով պայմանավորված են նրա հոգեկան հատկանիշները) եւ արյան (որը պայմանավորում է ցեղի մարմնական գծերը) փոխադարձ կապը, դրանց անկրկնելիությունը, ինքնատիպությունը:

Որպես «Աստծո կամքի արտահայտություն», ցե՛ղն է, որ ապահովում է բնական կապը մարդու եւ աստվածայինի՝ անցավորի եւ հավիտենականության միջեւ: Այլ խոսքով, անհատն անցավոր է, իսկ տեսակը՝ ենթակա մշտնջենացման, եւ մարդը հաղորդակցվում է հավիտենականի հետ՝ Աստծո (15) կամոք արարված իր տեսակը (ցեղը) հավերժացնելու ճանապարհով:

Ըստ Տարոնականության, տեսակը ո՛չ թե Աստծուց կանխորոշված է հավերժելու, այլ՝ ենթակա է ինչպես հավիտենացման, այնպես էլ

վերացման՝ կախված գոյության կռվում նրա կենսունակությունից եւ Աստծո հետ կենդանի կապից: Այստեղ տեղին է բերել Նժդեհի արտահայտած անհանգստությունը ճակատագրապաշտական ծուլության վերաբերյալ, որով համակվածները կարծում են, թե Հայ տեսակը երբեւէ վերանալ չի կարող. «Ես հարցնում եմ այնպես, ինչպես ո՛չ ոք դեռ չի հարցրել. ո՞ւր ենք գնում: Մեզ համար տեղ կա՞ պատմության մեջ... Գիտե՞ մեկը, որ եթե դադարենք գոյություն ունենալե՝ տիեզերաշենքի մեջ մի հատիկ հյուլե իսկ պիտի չշարժվի» (16):

Այսպիսով, Տարոնականության մեջ առկա է Աստվածահաղորդության խորհուրդը: Աստվածահաղորդություն - դա զգացումն է մեր մեջ գործող բացարձակ Ուժի՝ պատմակերտ Ոգու, առանց որի ճանաչման կարելի չէ հասկանալ պատմությունը, քանզի պատմությունը սոսկ դեպքերի արձանագրություն չէ, այլ՝ Ոգու հայտնություն:

«Ազգային ոգի - ահա՛ գերագույն հերոսը, միա՛կը, մեր պատմության անիվը դարձնող, մեր հավաքական ճակատագիրը վարող հերոսը:

Էապես միայն դա՛ է գործում պատմության մեջ եւ պատմության համար: Անհատ հերոսները ո՛չ այլ ինչ են, եթե ոչ միայն անձնավորողներն այդ ոգու: Մեռնում են հերոսները - Մանվելները, Մուշեղները, Վարդաններ՝ մնում է, սակայն, նրանց ոգին, որն իր մարմնավորումը գտնելով այլ հայերի մեջ՝ շարունակում է ապրել ու ներգործել» (17):

Իսկ Ոգին հնարավոր չէ հասկանալ առանց բնազանցության եւ էաբանության: Նա, ընդհանրապես, զգայարաններով ընկալելի չէ. այնտեղ գործում է տիեզերաստեղծ Ուժի (իմա՛ Աստծո) կամքը, ու շատ բան պատմության մեջ լինում է հենց ա՛յդ կամքով: Եվ պատմության մեջ հաղթում է նա՛, ով հաղորդակից է այդ Բացարձակին, Աստվածայինին՝ պատմաստեղծ Ոգուն: Վկա՛ եւ Հայոց պատմությունը. «Մեր ժողովրդի ամենազորավոր զենքը միշտ էլ եղել է ոգին» (18):

Տարոնականությունը այդ Ոգու տարերքի, ասել է՝ մեր պատմության անգիտակցականի (իռացիոնալի) իմացության փորձ է, առանց որի անհնար է խոսել ճակատագրի հետ: Այն պատմական ոգու ուսմունք է: *«Դա՛ր դեպի ոգին»*. ահա՛ Տարոնականության առաջադրած նախապայմանը:

Ցեղի դրսեւորման բնական միջավայրը Հայրենիքն է, երկրագնդի վրա այն հողակտորը, «որին միայն հարազատ ու բնիկ են մեր մարմինն ու ոգին...» (19): Նա Ցեղի համար ո՛չ թե շահագործելի հող է, այլ՝ էության պահանջ, որ *«մի բան է ոգուց եւ ոգու համար»*. ահա՛ թե ինչո՛ւ Ցեղի առաջին հրամայականն է - հայրենատիրությո՛ւն:

Տարոնականության մեջ առկա է հստակ ըմբռնումը ամբողջական Հայրենիքի, ինչպես նաեւ տարբերակումը՝ պատմական եւ բնական Հա-

յաստանի: Հ. Ասատրյանի բնորոշումներով, առաջինը պատմա-ազգագրական հասկացություն է, որով՝ հարափոփոխ, ենթակա սեղմումի կամ ընդլայնումի՝ կախված պատմական ժամանակաշրջանից: Պատմական Հայաստանի սահմանները մերթ հասել են Հրեաստան (Տիգրան Մեծի օրոք), մերթ դուրս եկել Կիլիկիա, մերթ ամփոփվել Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արեւելքում (Զաքարյանների ժամանակ) եւ այլն... Կա, սակայն, բնական Հայաստանը՝ որպես բնաշխարհագրական ըմբռնում, խիստ որոշակի բնական սահմաններով, որով եւ անփոփոխ: Դա Հայկական Բարձրավանդակ կոչվող, բնորեն ամբողջական աշխարհագրական տարածքն է՝ Հայ ցեղի արարման կամ կազմավորման բնական միջավայրը: Հայոց հավիտենական հայրենիքն է այդ՝ անկախ ազգագրական պայմաններից եւ ժամանակների քաղաքական սահմանագծումներից: Հայկական Բարձրավանդակից դուրս հայրենիք չկա՛, եւ նրա ամբողջական սահմաններում (իմա՛, ողջ բարձրավանդակին տիրելով) միայն հայերս կարող ենք իբրեւ ազգություն եւ պետություն օրգանապես զարգանալ ու հարատեւել:

* * *

Տարոնականությունը հայապահպանումի՝ օտարության մեջ հային հայ պահելու ինքնանպատակ ճիգ չէր, այլ՝ կորսված Հայրենիքը վերատիրելու եւ Հայաստանում ապրելու անդրդվելի կամք: *«Հայը «միջազգային» ասպարեզի էակ չէ... Նա իր Արշակ թագավորի նման հզոր եւ ազատահոգի է միայն ի՛ր հողի վրա: Հայրենի՛քն է նրա ինքնապաշտպանության միակ զենքը»*,- ասում է Հայկ Ասատրյանը (20): Այլ խոսքով, գաղթահայության ինքնապահպանման, նրա հավիտենորեն հայ մնալու երաշխիքը, ըստ Տարոնականության, ո՛չ թե պայքարն է այլասերման դեմ, այլ՝ պայքարը Հայրենիքի՛ համար:

Եվ, այս առումով, Տարոնականությունն ունի դարձի ուխտ՝ դեպի հայոց հավիտենական Հայրենիքը:

ՏԱՐՈՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԱՄՔ

Փաստելով, որ օրվա հայությունը զերծ է ազգային ամբողջականության զգացումից, որով եւ՝ ազգային միության գիտակցումից, նաեւ, լինելով հատվածապաշտ եւ եսակենտրոն՝ առաջնորդվում է նախանձի, հաշվի վրա հենված ներկուսակցական բարոյականով, Տարոնականությունը իբրեւ սկզբունք որդեգրելով *ներցեղային բարոյականը*՝ ձգտում է արմատախիլ անել ներքին պայքարի ախտը, բովանդակ հայության ուժե-

ը ներքին ճակատից տեղափոխել եւ կենտրոնացնել արտաքին վտանգի դեմ: «Կա՛ արտաքին ճակատը, որի վրա միայն կարելի է արժանապես հերոսանալ»,- նշանաբանում է Տարոնականությունը (21):

Միաժամանակ, մատնանշելով այն վտանգավոր հանդուրժողականությունը եւ համակերպվելու տրամադրությունը, որ առկա են մեր մեջ ներքին թշնամիների՝ ստոր, նյութապաշտ, թուլամորթ, հաշվենկատ «հայրենասիրությամբ» հայ կոչվողների ներկայության նկատմամբ, որոնք, ցավոք, հաճախ առաջավոր դիրքեր են գրավում մեր ազգային կյանքում, Տարոնականության գաղափարախոսները գտնում էին, որ անհրաժեշտ է ամենից առաջ ներքին այս արգելքները վերացնել, որպեսզի կարողանանք հաջողությամբ դիմագրավել արտաքին անխուսափելի արգելքները:

Որպես ցեղային միություն դավանող ուսմունք՝ Տարոնականությունը դեմ է «դասակարգային» մտածումին, որ կոչված է մասնատելու ազգային մարմինը: Նա ապադասակարգային ուսմունք է:

- Մի՛ ասեր «հայ աշխատավորություն», «հայ քաղքենիություն» (բուրժուազիա,- Մ. Լ.), «հայ ավատատեր», «հայ կղեր», ազգը մի՛ պատկերեր ներքուստ պառակտված, այլ ասա՝ «հավիտենական հայկականություն», «հայություն»,- ուսուցանում է Տարոնականությունը (22):

Նա ընդամենը ազգային միության քարոզ չէ. վստահ, որ «միությունը կստեղծվի ո՛չ թե կողմերի, հատվածների սակարկություններով, այլ՝ ընդհանուր նպատակի մը, արժեքի մը ենթարկվելու բացարձակ կամքով» (23), Տարոնականությունը սահմանում է այդ ընդհանուր նպատակը (իմա՛ Ցեղի հավերժացումը) եւ ցույց տալիս ընդհանրական հավիտենական արժեքները (իմա՛ Ցեղը եւ Հայրենիքը): Միա՛յն այս գերնպատակի ու ընդհանրական այս արժեքների շուրջ եւ դրանց ծառայելու կամքով է հնարավոր մեր ազգային միությունը:

* * *

Երկու կարեւոր, փոխկապակցված հասկացությունների՝ ազգային զգացումի եւ ազգային գիտակցության վերաբերյալ Տարոնականությունն ունի հետեւյալ բացատրումները:

Ազգային զգացումը արդյունք է ազգային հավաքական էության, եւ առանձին անհատի մեջ հանդես է գալիս իբրեւ այդ հավաքական էությունից փոխանցված մասնիկ: Այս դեպքում, անհատը բնազդաբար զգում է, որ ինքը կապված է մի հավաքականության եւ զգացումի (բնազդի) թելադրանքով ապրում է այդ հավաքականության կյանքով (կենցաղով, բարոյականով եւ այլն):

Ազգի հավաքական գիտակցությունը ձեւավորվում է նրա առանձին անհատների անջատ-անջատ գիտակցությունների միավորումով եւ

ամբողջացումով: Անհատի ազգային գիտակցությունը հենվում է նրա ազգային զգացումի վրա. դա է ամենասերտ կապը ազգի առանձին անհատների գիտակցությունների միջեւ: Այս դեպքում, անհատը սկզբում գիտակցում է այն կապերը, որ կապում են իրեն ազգային հավաքականությանը, այն առանձնահատկությունները, որոնցով ինքը տարբերվում է մյուս ազգերից, գիտակցում է սեփական արժեքը ազգերի համալիրում, ապա, գիտակցաբար կամենում է պահպանել ու զարգացնել դրանք՝ այդպիսով հավերժացնելով իր ազգային անկրկնելիությունը, ամրապնդելով ազգի հավաքական միությունը:

ՏԱՐՈՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԵԼԱԿԵՏԸ

Երկու ոգիների պայքար՝ պայքար հավիտենարժեքի եւ անցավորի, համահայկականության եւ հատվածականության, հայկական կողմնորոշման եւ օտարահակության միջեւ. այս պայքարում առաջինի ընկրկումն է, ըստ Տարոնականության տեսաբանների, հայության անկման ներքին հոգեբանական պատճառը: Այդ ոգիներից առաջինը նրանք անվանեցին «տարոնական» - *«տարոնական ոչ թե «տարոնցու» տեղական հասկացությամբ, այլ՝ կապակցությամբ «հավիտենական հայի», որի ոգին հայտնություն ստացավ Տարոնեն»* (24):

Որո՞նք են, ըստ Տարոնականության գաղափարախոսների, Տարոնի՝ պատմականորեն առանձնահատուկ գծերը:

- Տարոնն է եղել հեթանոսական Հայաստանի գլխավոր հոգեւոր կենտրոնը, որ մնաց այդպիսին Հայաստանի քրիստոնեացումից հետո նաեւ:

- Տարոնում է ստեղծվել «Սասնա Ծռեր» դյուցազնավեպը (25):

- Տարոնի ծնունդ են հայ հոգեւոր արժեքների երկու հսկաները՝՝ Մաշտոցն ու Խորենացին:

- Տարոնում հաստատվեցին հայոց ռազմուժի ասպետները՝ Մամիկոնյանները:

- Տարոնն է արեւմտահայ նորագույն ազատամարտի խռովարանը, ուր հիմնականում «թրծվեցան կամ դիմագծվեցան» ամենահինքնատիպ մարտիկները այդ պայքարի:

Պատմական այս ճշմարտությունները, ըստ Տարոնականության առաջնորդների, սոսկ պատահական զուգադիպություններ չեն, այլ՝ տարոնական ոգու խռովքի արտահայտություններ, այդ ոգու հայտնության դրվագներ, եւ տարոնական այդ ոգին է մեր ցեղի հավիտենական զենքը, նրա նկարագրի ա՛յն գիծը, «որ հաղթական հանդիսացավ անցյալ դարերի փոթորիկների դեմ ու պարբերաբար կարելի դարձրեց մեր

ազգային վերածնունդներն ու հեղափոխությունները» (26): Եվ պատահական չէր համարվում նաեւ այն, որ դժնդակ այդ տարիներին, սփյուռքի հայրենակցական բազմաթիվ միությունների մեջ,- որոնք հիմնականում որդեգրել էին բարեգործական, բարեսիրական սահմանափակ նպատակներ,- հե՛նց Տարոն-Տուրուբերանի Հայրենակցական միությունը պարզեց հայրենատիրության դրոշը եւ որդեգրեց Մամիկոնեից ուխտը:

Իսկ որո՞նք են, ըստ շարժման գաղափարախոսների, տարոնական ոգու հայտնության գլխավոր գծերը կամ տարոնական հայի՝ պատմականորեն բախտորոշ գործերը (27):

ա) *Հայրենաստեղծում* - Քաղաքական Հայաստանի (պետության,- Մ. Լ.) առաջին կորիզը ձեւավորվել է Տարոնում եւ տարածվել նախ՝ Այրարատի, ապա՝ ողջ Հայկական Բարձրավանդակի վրա, այդպիսով քաղաքականապես ամբողջացնելով Հայոց հայրենիքը (իմա՛ միավորյալ պետության ստեղծում,- Մ. Լ.):

բ) *Ազգակերտում* - Հայկական Բարձրավանդակում հայ տարրի (մեր կարծիքով՝ Հայ ցեղի տոհմերի,- Մ. Լ.) ազգագրորեն ամբողջացումը, կազմակերպված ազգության ստեղծումը իրականացրին տարոնական հայերը:

գ) *Հայկական կողմնորոշում* - Տարոնական հայն է հայկական կողմնորոշման դրոշակակիրը, որն, իբրեւ ազգայնական, նշանաբանեց. «Ո՛չ Հռոմ, ո՛չ Պարսկաստան, այլ՝ անկախ Հայաստան»:

դ) *Հայկական բարոյական «ես»-ի արձանացում* - արեւելյան եւ արեւմտյան ոգիների միջեւ հայոց բարոյական ու հոգեւոր ինքնատիպ նկարագրի կերտիչը տարոնական հայն է, որ եղավ քրիստոնեության միջոցով հայկական կողմնորոշման կրոնականացնողը (ազատության իդեալը կրոնական զգացումին կապողը):

ե) *Հայոց մշակութաստեղծ «ես»-ի արձանացում* - Մաշտոցի պարգեւած տարոնական-համահայկական լույսն էր, որ մեր ազգի ամբողջականության պահպանման մտահոգությամբ ամրապնդեց Հայոց մշակութային անհատականությունը:

զ) *Հայոց հերոսական ոգու եւ ռազմական կորովի կերտում* - Տարոնն է Հայոց ռազմական կորովի խռովարանը եւ տարոնական հայը՝ հայոց հերոսական ոգու մարմնավորողը: «Առանց Վահագնապաշտության չէր կրնար ապրիլ հեթանոս Հայաստանը, առանց Մամիկոնյան Վարդանի պաշտամունքի՝ քրիստոնյա Հայաստանը պիտի չունենար գոյությունը իմաստավորող երկունք՝ ապագայի գծի վրա: Ո՛չ մեկ պատահականություն, որ թե՛ Վահագնը, թե՛ Վարդանը տարոնային ոգիներ էին...» (28):

Տարոնականությունը, որ փորձում է համադրել հայոց մշակութաստեղծ ոգին եւ ռազմական կորովը, քարոզում է արիադավան մտավորա-

կանի ու բարոյաշունչ ռազմիկի զինակցություն՝ հանուն Ցեղի եւ Հայրենիքի - «ռազմախանդ մշակույթ եւ կուլտուրաստեղծ հերոսականություն, հոգեւոր Մեսրոպականություն եւ սրտավոր Վարդանականություն՝ միաժամանակ» (29):

- **Տարոնակնիք հայկականություն**,- բառացի այսպես է բնորոշում Տարոնականությունը շարժման գաղափարախոսներից Արիս Տեր-Իսրայելյանը (30) եւ պարզաբանում.

ա) Հայկականությունը (նկատի է առնվում վերը թվարկած առանձնահատկությունների հանրագումարը,- Մ. Լ.) սկիզբ է առել եւ կազմակերպվել Տարոնի մեջ եւ այնտեղից տարածվել ողջ Հայկական Բարձրավանդակի վրա,

բ) Համահայկական նշանակություն ունեցող հոգեւոր անմեռ արժեքները առավելապես Տարոնի ծնունդ են,

գ) Համահայաստանյան հայրենասիրությունը եւ համահայկական ազգասիրությունը միշտ էլ եղել են Տարոնի հայության ցեղային նկարագրի ամենաբնորոշ գծերը (31):

- Հայոց աշխարհի ո՞ր անկյունում հայն այնպե՞ս պաշտեց իր հողը, այնպե՞ս առյուծացավ ճակատամարտերում, իր երկրի համար այնպե՞ս մեռնել գիտցավ, ինչպես Տարոն աշխարհում,- ասում է Նժդեհը՝ այսպես կարեւորելով Տարոնի անչափելի նշանակությունը. *«Ճի՛շտ է, սուրբ է հայրենի երկրի ամեն մի բուռ հողը, սակայն, ճիշտ է եւ այն, որ հայրենիքներն ունեն իրենց պատմա-ռազմագիտական տեսակետից ամենանվիրական ու ամենակարեւոր երկրամասը - այն երկրամասը, ուր ցեղը ամենեն շա՛տ է արյուն թափել, կուլտուրական գանձեր դիզել, հերոսական ու պատմություն ստեղծել, ա՛յն երկրամասը, առանց որի՝ հայրենիքը ո՛չ թե զորավոր ու անկախ լինել, այլեւ՝ իր գոյությունը պահել, ինքնապաշտպանվել չի կարող:*

Ճակատագրորեն մեծ է Տարոնի նշանակությունը մեր Ցեղի եւ Հայրենիքի պաշտպանության համար: Քանի դեռ մեր երկրի աշխարհագրական մարմնից կտրված կմնա Տարոնը՝ վտանգված կմնա մեր հայրենիքի ապագան» (32):

* * *

Թեեւ Տարոնական շարժումը խորքով համահայկական էր, այդուհանդերձ, շարժումն ամբաստանողները չարախոսում էին, թե նա հատվածականություն է սերմանում հայության մեջ, թե նա ընդամենը տարոնցի հայերի շարժում է՝ տարոնցիություն, որը Հայաստանի ոգին ուզում է փոխարինել նրա մեկ գավառի անունով:

Վճռապես մերժելով նման մեկնաբանությունը, Ա. Տեր-Իսրայելյա-

նը հաստատում է. *«Տարոնականությունը պետք չէ միամտորեն, տգիտորեն կամ չարամտորեն շփոթել տարոնցիության հետ: Տարոն ծնած ամեն հայ տարոնական չէ եւ ո՛չ ալ Տարոնի սահմաններեն դուրս ծնած ամեն հայ՝ հակա- կամ ոչ-տարոնական... Տարոնական է ամեն հայ, որ Հայաստանի համար ապրելու, ստեղծագործելու եւ մանավանդ մեռնելու կամք ունի...»* (33):

Տարոնականության էությունը չհասկացողները հաճախ ուսմունքի հատվածականությունը «հիմնավորում» էին՝ կառչելով բառին:

Ճիշտ է, նոր է բառը, բայց հին են ոգին եւ գաղափարը: Որպես Ցեղի հավիտենականի եւ Հայրենիքի սեփականության զգացում, դրանց համար քաջաբար կռվելու ու մեռնելու ուխտ, Տարոնականությունը նույնքան է հին, որքան Տարոնն ու հայությունը: Այս առումով, բավական դիպուկ է Նժդեհի հետեւյալ համեմատությունը. «Սիոնը կար, «սիոնականություն» բառը չկար: Նա հազարամյակների պատմություն ունի, սա՝ տասնամյակների: Կարո՞ղ եք պնդել, որ անհայրենիք հրեության դարավոր կյանքը վարողը սիոնականությունը չէ եղել: Արդյոք քաղաքական սիոնիզմը հրեության դարերի հոգեւոր սիոնականության արդյունքը չէ՞: Ինչո՞ւ հրեան իր պաշտամունքը Սիոնի հանդեպ անվանեց սիոնիզմ, իսկ իրեն՝ սիոնիստ: Եվ, կարծո՞ւմ եք, որ այդ «բառը» զգալապես (զգալիորեն,- Մ. Լ.) չակտիվացրեց օրվա հրեան: Սիոնականությունից առաջ կարելի՞ էր երեւակայել, որ մեր օրերում Պաղեստինը պաշտպանելու համար աշխարհ կգա հին հերոսական Մակաբեյներին հիշեցնող մի նոր սերունդ: *Չխաղա՛նք բառերի հետ... Ով խուսափում է ոգուց եւ կառչում բառերին, ցույց է տալիս, որ թշնամի է խորքին, իմաստին, բովանդակության»* (34):

Տարոնականության մեջ էականը անունը չէ, կարեւոր չէ նույնիսկ ա՛յն, թե արդյո՞ք Տարոնում է ձեւավորվել Հայոց պետության առաջին կորիզը կամ Տարոնի՞ հայերն էին արդյոք Հայկ. Բարձրավանդակում հայ տարրի համախմբողն ու ազգորեն ամբողջացնողը. ապագա հայագիտությունը կհաստատի կամ կժխտի դրանք: Տարոնականության մեջ էականը նրա քարոզած բարոյականն է, հավիտենարժեք հասկացությունների վերաբերյալ նրա տված ճշմարտությունները, Աստված-Ցեղ-անհատ կապի մեկնումները, ներցեղային բարոյականի՝ նրա սահմանած ընդհանրական արժեքները...

Տարոնականության խնդիրը ո՛չ թե Տարոնի գերակայության հիմնավորումն է Հայոց այլ «աշխարհների» նկատմամբ, այլ՝ պատմականորեն Տարոնում ստեղծված հավիտենական արժեքների համահայկականացումը:

ԴԱՍԱԿԱՆ ՀԱՅԻ ԽՆԴԻՐԸ

Արդեն ասվեց, որ Տարոնականության մեջ առկա է Աստվածահաղորդության խորհուրդը, որն, առաջին հերթին, նշանակում է՝ հաղորդակցում Աստծո կամքով մեր մեջ գործող Ցեղի ոգուն, որով պայմանավորված են մեր հոգեգծերը: Եվ որքան մենք հավատարիմ ենք Աստծուց մեզ տրված այդ հոգեգծերին, առաքինություններին, այնքանով հաղորդակից ենք իրեն:

Սակայն, պատմության բերումով, հայությունն, իր ընդհանրության մեջ, մոռացության է տվել այն հոգեգծերը, որ տրված են եղել իրեն սկզբնական (դասական) վիճակում: Ահա՛ թե ինչո՛ւ, մեր դժբախտությունների հոգեբանական պատճառները փնտրելով այն տարբերության մեջ, որ ունի նոր ժամանակների հայը դասական, ամբողջական հայից, տարոնական ոգու առաջնորդները խնդիր էին դնում *«գտնել դասական հայի հոգեգծերը եւ դաստիարակչորեն զանոնք հարազատել տալ ապրող հայ սերնդին»* (35): Եվ հենց դա էր համարվում Հայոց ճակատագիրը փոխելու հիմնական միջոցը, ցեղային խառնվածքով օժտված նոր հայի կերտման առաջին քայլը:

Դասական հային անվանեցին «տարոնական կամ տարոնատիպ», որպես պատճառաբանում բերելով Տարոնին եւ տարոնածին հայերին վերագրվող, վերը արդեն թվարկած համահայկական արժեքներն ու համահայաստանյան գործերը: Որպես տարոնական հայի տիպար ներկայացվեց Մամիկոնյան հայը, որի մեջ անբաժան են ուժն ու բարոյականը՝ հզորության եւ սրբության զգացումները, եւ որի հմայիչ գաղափարատիպն էր նկատվում Վարդան սպարապետը (36):

Զինվորագրվել Մամիկոնեից Ուխտին, քայլել Մամիկոնյանների ճամփով, Ցեղի եւ Հայրենիքի համար նրանց պես մեռնել ուզել ու մեռնել գիտենալ - ահա՛ թե ի՛նչ է պահանջում Տարոնականությունը, որի խնդիրը *«հայ մարդու կաղապարումն է՝ ըստ Մամիկոնյան հայու պատկերի»* (37):

- Նմանվի՛ր Մամիկոնյան հային, որ զորավոր էր դեպի հայրենի երկիրն ու ցեղը տածած սրբազնության զգացումով եւ նրանց համար մեռնելու իր աննահանջ կամքով,- պատգամում է Նժդեհը (38):

Տարոնականության առաջնորդները ակնկալում էին տկարությունն իր մեջ հաղթահարած մի նոր սերունդ՝ վտանգի՛ սերունդ (վտանգը զգացող, կռահող եւ այն կանխող սերունդ), որը Մամիկոնյան հրաշունչ ռազմիկներից կսովորեր՝ **«ԱՊՐԵԼ ՈՒ ԳՈՐԾԵԼ ՄԻԱՅՆ Ա՛ՅՆ ԲԱՆԻ ՀԱՄԱՐ, ՈՐԻ ՀԱՄԱՐ ԱՐԺԵ ՄԵՌՆԵԼ, ԵՎ ՄԵՌՆԵԼ Ա՛ՅՆ ԲԱՆԻ ՀԱՄԱՐ, ՈՐԻ ՀԱՄԱՐ ԱՐԺԵՐ ԱՊՐԵԼ»** (39):

Վտանգված Հայրենիքի եւ Ցեղի համար մեռնելու վճռական կամք - սա՛ է տարոնական հայի գերագույն բարոյականը:

Մեռնել, բայց չպարտվել, չտեսնել հայրենիքը պարտված, չտանել պարտության ամոթանքը - այսպիսի՛ն է Տարոնականության ռազմական բարոյականի օրենքը:

Մեռնելո՛ւ կամք - դա աննպատակ մահվան կամ սոսկ նահատակության ձգտում չէ, այլ՝ Ցեղի ու Հայրենիքի համար հոժարակամ եւ արիաբար մեռնելու ներքին մղում, պատրաստակամություն: Այն մահվան սարսափն իր մեջ սպանած, ասել է՝ մահը հոգեբանորեն հաղթահարած մարդու վճիռն է՝ զոհաբերվելու Ցեղի բագինին, առանց որի հնարավոր չէ ո՛չ մի հերոսացում, ո՛չ մի հաղթանակ: «Գոյության իմաստը հասկանում են նրանք, ովքեր մեռնելու կամք ունեն» (40):

Եվ այս առումով, Տարոնականությունը, Հայկ Ասատրյանի բնորոշմամբ, *«ուսմունք չէ «բոլորի եւ ոչ ոքի համար», այլ միայն ընտրյալների: Դա կանչ է՝ ուղղված միայն նրանց, որոնք ընդունակ են բարոյական նորոգումի»*: Դա ուսմունք է ա՛յն նախատեսված ընտրանու համար, որ *«սրտի կսկիծով ապրում է տխուր ներկան եւ հոգու աչքով տեսնում երջանիկ ապագան»* (41):

* * *

Միաժամանակ, Տարոնական ոգու առաջնորդները սահմանում են այն հատկանիշները, որոնք պարտադիր են Ցեղի անունից հանդես եկող հայ անհատների ու կազմակերպությունների համար.

ա) Ցեղի եւ Հայրենիքի համար մեռնելու բացարձակ կամք,

բ) Ցեղային հավիտենականի խոր զգացում,

գ) Ներցեղային բարոյական,

դ) Հաղթողական ոգի,

ե) Պատմական ճակատագրի խոր ճանաչողություն,

զ) Հայրերի գործի եւ նպատակի հաղորդություն,

է) Հայրենազգացություն,

ը) Օտարությունը որպես գերագույն դժբախտություն ապրելու առաքինություն,

թ) Մեծագործության կամք ու բարոյական:

«Ասոնք բարոյագիտական-դաստիարակչական որակներ են եւ ո՛չ թե քաղաքական նշանախոսքեր, ապրումի խնդիրներ եւ ո՛չ թե կանոնագրական կետեր, բարոյական ընդհանուր պահանջներ եւ ո՛չ թե կուսակցական մասնավոր պարտականություններ, սիրտը մշակող բովանդակություններ եւ ո՛չ թե կարգապահական ձեւեր: Բայց առանց ասոնց՝ ո՛չ քաղաքական ճշմարիտ գործն ու նպատակն են հնարավոր, ո՛չ ժողովուրդի

ցեղային տարերքին համապատասխանող կանոնագրություն, ո՛չ նվիրումի պարտականության զգացում, ո՛չ կարգապահական բարոյականություն» (42):

Այս որակները կրողներին է տրված միայն բարոյական իրավունք՝ խոսելու եւ հրամայելու Ցեղի անունից:

* * *

Տարոնականությունը մեր պատմության հեթանոսական եւ քրիստոնեական ժամանակաշրջանները արժեւորում է ցեղայինի առաջնայնության սկզբունքով՝ գնահատելով եւ օրինակելի համարելով այն ամեն ցեղային-հայկականը, որ առկա է մեր պատմության ե՛ւ հեթանոսական, ե՛ւ քրիստոնեական դարերում.

«Մենք շարունակ պիտի քարոզենք մեր հեթանոսական Աստծո՝ Վահագնի ոգին մեր ընթերցողներուն, որպեսզի անոնք առողջարար եւ կենսատու օդ շնչեն եւ դառնան օգտակար զինվորներ արդարության բանակին:

Մենք պիտի հետեւինք այն ճամփուն, ուրկե քալեր են ու կքալեն բոլոր հայրենասերները, եւ պիտի կատարենք այն աշխատանքները, ինչ աշխատանք որ մեզ կթելադրեն Սուրբ Սահակներն ու Մեսրոպները եւ Մամիկոնյան Վարդանները» (43):

Մի հանգամանք եւս:

«Ոգին մահ չունի». «մեր էության մեջ մենք հող չենք, որ հող դառնանք, այլ՝ ոգի, որ ոգի մնանք»: Բարոյական այս մեծ իմացությունների վրա են հենվել Տարոնականության գաղափարախոսները:

- Երբ «Տարոն» եմ ասում, ինձ թվում է, թե լեռներում ապրող գերբնական ոգիներն են գծում հանճարի եւ հերոսության հորիզոնները,- ասում է Հ. Ասատրյանը (44) եւ պատգամում. *«Ոգին չի՛ պահվում. ոգին աճում է գործելով: Գործի՛ր այնպես, որպես թե գերբնական ուժերից զորություն ես ստանում եւ ո՛չ թե դատարկվում նրանց առաջ: Այդպիսով՝ դու կգործես քո Աստծո հետ: Կգործես կարելիությունների մի աշխարհում, որի բոլոր իրացումների աղբյուրը քո կամքն է»* (45):

Այս ամենը մեզ խորհել են տալիս ոգու բացարձակության, կամքի ամենակարողության, բնության թաքնված ուժերի շուրջ, ու, միաժամանակ, խանդավառության եւ ուսումնասիրության ասպարեզ բացում թաքնագիտությամբ, ոգեգիտությամբ հետաքրքրվող այն հայորդիների համար, որոնք առայժմ ճգնում են միայն այդ բնագավառի օտար հեղինակներին եւ ուսմունքներին ծանոթանալու:

* * *

«Տարոնի Արծիվի» 12 համարներով (Տարոնականությունը որպես գաղափարախոսություն առկա է «Տարոնի Արծիվի» միայն 1938-1939թթ. 12 համարներում, այսինքն, մինչեւ ամսաթերթի՝ Սոֆիայից Նյու Յորք տեղափոխումը) Տարոնականության տեսաբանները, իրենց իսկ խոստովանությամբ, չհասցրին տալ ամբողջությամբ ուսմունքը, այլ միայն Տարոնականության նախապատրաստությունը, նրա ներածությունը, եւ դեռ «ցեղահաղորդ հայ մտավորականությանը կմնա հիմնավորել եւ խորացնել համահայկական ոգիի, փառքի, հերոսականի, մեր ցեղի անցյալ եւ ապագա հավիտենականի այդ կենարար ուսմունքը, դավանանքը» (46):

- Դեռ չկան, գրված չեն *«Հայոց ցեղային բարոյագիտությունը»* եւ *«Հայոց պատմության փիլիսոփայությունը»*. այսպիսի պատգամ են թողնում մեզ տարոնական ոգու առաջնորդները (47) եւ Տարոնականությամբ համակվելու ընդունակ ամեն ցեղազգաց Հայի, իբրեւ ժառանգություն, փոխանցում հավիտենական նշանախոսք. **«Ցեղն է իմ գոյության իմաստը եւ Հայաստանը՝ իմ ճակատագիրը»** (48):

Ծանոթագրություններ

1. Հույս կար, թե Եկեղեցին կխանդավառվի Տարոնականության հոգեւոր ուսմունքով: Հակառակ դեպքում, Նժդեհի բառերով ասած, «մեռյալ ծիսակատարություններով ու մեռելաթաղով զբաղվող Եկեղեցին, վերջ ի վերջո, իր ժողովուրդն ու Աստվածը պիտի թաղի» («Տարոնի Արծիվ», 1938թ., թիվ 2, էջ 39):

2. «Ռազմիկ» հասարակական-քաղաքական թերթը լույս է տեսել 1937թ.-ի փետրվարի 7-ից մինչեւ 1944թ.-ի մարտի 4-ը: Թերթի անդրանիկ համարի առաջնորդողում ասվում է, որ այն լինելու է դարասկզբին Ռուբեն Զարդարյանի խմբագրությամբ Պլովդիվում լույս տեսած նույնանուն պարբերականի ավանդույթների շարունակողը, հիմնական նպատակ ունենալով՝ *«դաստիարակիչ խոսքի տքնությամբ ոգիները բոցավառել այն օրվան կարոտով, երբ մեր կյանքին մեջ հոռետեսությունը, նվաստությունը եւ մանրուքի հոգեւոր խեղճությունը տեղի կուտան Հայաստանի համար աշխատելու եւ մեռնելու կամքին, երբ մեր ցեղի աչքերում մեջ կրկին կփայլատակեն հերոսական երկունքի եւ մեծագործության հին ոգին եւ կրակը»* («Ռազմիկ», Պլովդիվ, 1937թ., 7 փետրվարի, Ա. տարի, թիվ 1): Թերթի հավաքածուն պահվում է Պլովդիվի Իվան Վազովի անվան գրադարանում:

3. Ղեւոնդ պատմիչի վկայությամբ, 775թ.-ին, Բագրեւանդ գավառի Արձնի գյուղի մոտ արաբների հետ տեղի ունեցած ճակատամարտում,- որը ղեկավարում էին Մամիկոնյան տոհմի իշխանները,- դժվարին կացության մեջ

ընկած հայ ռազմիկները իրար քաջալերում էին հետեւյալ խոսքերով. *«Քաջությամբ մեռնենք մեր աշխարհի եւ մեր ազգի համար, եւ թող մեր աչքերը չտեսնեն մեր սրբարանների... ոտից կոխան լինելն ու պղծվելը...»* (Ղեւոնդ, «Պատմություն», Երեւան 1982թ., էջ 119):

4. «Տարոնի Արծիվ», 1938թ., թիվ 1, էջ 2:
5. Նույնը, 1938թ., թիվ 2, էջ 34:
6. Նույնը, էջ 33:
7. «Տարոնի Արծիվ», 1938թ., թիվ 1, էջ 2:
8. Մոտեցող պատերազմին հոգեբանորեն նախապատրաստվելու եւ կորսված Հայրենիքին վերատիրելու քարոզչությունը հետապնդում էր գործնական նպատակներ: Նժդեհը նախատեսում էր սպասվող պատերազմի դեպքում Բուլղարիայում կազմակերպել կամավորական ջոկատներ, որոնք բուլղարական բանակի կողքին պիտի կռվեին Թուրքիայի դեմ: Թերեւս, դա չէր սահմանափակվելու միայն Բուլղարիայով եւ տեղի հայությամբ. նպատակ կար ողջ գաղթահայությանը օգտագործել հակա-թուրքական ճակատում:
9. Զոր. Սմբատի շուրջ համախմբված՝ հիմնականում մշեցի, նախկին հայ կամավորների միության պաշտոնաթերթ «Հայ Մարտիկը», որ հրատարակվում էր Մարսելում, մեկ-երկու գրություններ լույս ընծայեց Տարոնականության վերաբերյալ («Հայ Մարտիկ», թիվ 19, 1937թ.; թիվ 21, 1938թ.), ուր, թյուրիմացաբար, այն ընկալվում էր իբրեւ տարոնցիություն: Տարոն-Տուրուբերանի Հայրենակցական Միությունը պաշտոնական ազդարարությամբ դատապարտեց «Հայ Մարտիկի» այդ դիրքորոշումը («Տարոնի Արծիվ», 1938թ., թիվ 3-4):
10. «Վեմ», Փարիզ 1938թ., թիվ 22, էջ 102-103:
11. «Տարոնի Արծիվ» թիվ 5-6, 1938թ. եւ թիվ 7, 1939թ.:
12. «Տարոնի Արծիվ», 1938թ., թիվ 5-6, էջ 2:
13. «Պատմություն Տարոնի աշխարհի», Բեյրութ 1957թ., էջ 1104:
14. «Տարոնի Արծիվ», 1939թ. թիվ 8, էջ 15:
15. Աստծո գաղափարի տակ հասկացվում է՝ տիեզերաստեղծ, հավիտենական մի Ուժ, բացարձակ ու բարձրագույն մի արարիչ էություն: Տարոնականության մեջ էական չէ՝ Աստծո կա՞մքն է ստեղծել տիեզերքը, թե՞ տիեզերքի կամքն է ստեղծել Աստծուն. երկու դեպքում էլ մենք ծնունդ ենք արարչական կամքի, մի մասնիկը՝ արարչագործության:
16. «Տարոնի Արծիվ», 1938թ., թիվ 1, էջ 4:
17. Գ. Նժդեհ, «Խորհրդածություններ», էջ 52:
18. «Տարոնի Արծիվ», 1938թ., թիվ 2, էջ 35:
19. Նույնը, 1939թ., թիվ 7, էջ 6:
20. Նույնը, 1938թ., թիվ 5-6, էջ 56:
21. Նույնը, էջ 6:
22. Նույնը, 1939թ., թիվ 11, էջ 3-4:
23. Նույնը, էջ 4:
24. Նույնը, 1938թ., թիվ 3-4, էջ 1-2:
25. Թեեւ Շիրակացու «Աշխարհացույցում» Սասուն գավառը չի

ընդգրկված Տարոն աշխարհի մեջ (Շիրակացի, «Մատենագրություն», Երեւան 1979թ., էջ 293), սակայն, պետք է հաշվի առնել, որ «Աշխարհա-ցույցն» իրենից ներկայացնում է ընդամենը պատմական մի որոշ՝ Արշակունիների ժամանակաշրջանի Մեծ Հայքի վարչական-տարածքային բաժանումը եւ ոչ բոլոր դեպքերում է հաշվի առնում տարածքի բնաաշխարհագրական ամբողջականությունը: Օրինակ՝ Խութ գավառը ընդգրկված է Տարոն աշխարհում, իսկ նրա կողքին գտնվող, նույն բնական պայմաններով, ազգագրական գրեթե նույն առանձնահատկություններով Սասունը մտցված է Աղձնիք աշխարհի մեջ:

Տարոնի աշխարհը (Տուրուբերան նահանգ) բնաշխարհագրական ամբողջություն է, մի լեռնաշխարհ՝ չորս կողմից շրջապատված լեռնային հաստ գոտիներով (այդ թվում եւ Սասունի լեռներով), որի կենտրոնում ընկած է Մշո դաշտը:

26. «Տարոնի Արծիվ», 1938թ., թիվ 2, էջ 42:

27. Տարոնականության պատմական ելակետը հիմնավորող դրույթները հենվում էին այն ժամանակվա գիտական մտքի վրա: Այսօր, հայագիտության մի շարք նվաճումներ կարող են փոխել որոշ գնահատականներ՝ բնավ չազդելով ուսմունքի էության վրա:

Ի դեպ, Տարոնի առանձնահատկության մասին արտահայտվել են այլ հեղինակներ եւս: Մասնավորապես, Լեոն իր «Հայոց պատմության» մեջ նկատում է. *«... Տարոնը հայկական պետության մի շատ կարեւոր մասն էր կազմում, այնքան կարեւոր, որ նրան անվանում էին Հայոց Տուն, պետք է ենթադրել այն պատճառով, որ հայության ամենանվիրական ավանդությունների երկիրն էր այդ»* (Լեո, Երկերի ժողովածու, Եր. 1967թ., հտ. 2, էջ 520): Իսկ Գարեգին Սրվանձտյանցը, Մամիկոնյաններին արժե-վորելիս, այն միտքն է հայտնում, թե վերջիններս Տարոնում հաստատ-վելով է, որ քաջության շնորհն ու անունը վաստակեցին. *«Ես կըսեմ՝ Մամիկոնյանք եկան այս [Մշո] աշխարհին մեջ եւ աշխարհի բնակիչներով քաջության անունը միշտ ժառանգեցին, քան թե զայն իրենց հետ բերին ու ասոնց տվին»* (Գ. Սրվանձտյանց, Երկեր, Երեւան 1978թ. հտ. 1, էջ 31):

28. «Տարոնի Արծիվ», թիվ 3-4, էջ 3-4:

29. Նույնը, թիվ 2, էջ 34:

30. ***Արիս (Արիստակես) Տեր-Իսրայելյանը*** *ծնվել է Բուլանըխում: Մանկությունից ծնողների հետ փոխադրվել է Կովկաս, ուր սովորել է Էջմիածնի Գեւորգյան ճեմարանում: 1912թ.-ին անցել է ԱՄՆ եւ 1917թ.-ին այնտեղ հիմնված Տարոն-Տուրուբերանի Հայրենակցական Միության հիմնադիրներից է:*

Ա. Տեր-Իսրայելյանը Տարոնականության գաղափարախոսներից է. Տարոնական ուսմունքի վերաբերյալ ունի հոդվածաշար «Տարոնի Արծիվում»:

Մինչեւ կյանքի վերջը ապրել է նյութական ծանր պայմաններում: Մահացել է 1942թ.-ի դեկտեմբերի 18-ին, ԱՄՆ-ի Էքրըն Օհայո քաղաքում: Մահվան առթիվ, «Տարոնի Արծիվը», խմբագրականով հարգել է նրա հի-

շատակը (Տարոնի Արծիվ», Նյու Յորք 1943թ., թիվ 22):

31. «Տարոնի Արծիվ», 1938թ., թիվ 3-4, էջ 6:

32. Նույնը, թիվ 1, էջ 4-5:

33. Նույնը, թիվ 3-4, էջ 6:

34. Նույնը, թիվ 5-6, էջ 16: Նժդեհի այս համեմատությունը ոմանց բերել է այն անլուրջ եւ անհեթեթ հետեւության, թե իբր Տարոնականությունը Սիոնականության ընդօրինակումն է:

35. «Տարոնի Արծիվ», 1939թ., թիվ 7, էջ 2:

36. Մենք չենք անդրադառնա պատմական այն կարեւոր հարցին, թե որքանո՞վ են Վարդանի ու Ավարայրի դերերը չափազանցված (ինչպես եւ որքանո՞վ արդար՝ Սյունյաց Վասակին տրված դավաճանի խարանը), այլ կուզենք հիշեցնել, որ Վարդանի պաշտամունքը ժողովրդի մոտ դարերով նույնացվել է Ազգի ու Հայրենիքի պաշտամունքի հետ, եւ Տարոնականության գաղափարախոսները, որ նպատակ չունեին կյանքից կտրված ուսմունք տալու, այս իրողության հետ հաշվի են նստել: Կարծում ենք, որ նույնանման մոտեցման արդյունք է նաեւ նրանց կողմից Լուսավորչի տան մեծարումը իր՝ իբր «հայաշունչ» հայրապետներով: Այստեղ կարեւոր է հիշատակել նաեւ, որ Տարոնականության հիմնադիր-ները Լուսավորչին ու Մամիկոնյաններին չէին համարում այլազգիներ, ինչպես սովորաբար ընդունված է համարել:

37. «Տարոնի Արծիվ», 1939թ., թիվ 11, էջ 9:

38. Նույն տեղում: Մամիկոնյաններին նմանվելու Տարոնակա-նության պատգամն ու պահանջը բացատրվում էր նրանով, որ Մամիկոնյան հայերի մոտ Ցեղի եւ Հայրենիքի համար կռվելու ու մեռնելու բարոյականն ուներ ժառանգական բնույթ՝ փոխանցվելով սերնդե-սերունդ (հիշենք Մամիկոնյան ասպետների շքեղ փաղանգը՝ Վաչե, Վասակ, Ձիրավի Մուշեղ, Մանվել, Ավարայրի Վարդան, Վահան, Կարմիր Վարդան, Գայլ Վահան, 8-րդ դարի Մուշեղ...): Միաժամանակ, հաշվի էր առնվում եւ այն, որ մեր պատմիչների ու Եկեղեցու՝ երբեմն նաեւ ենթակայական մոտեցման շնորհիվ, Հայոց պատմության ու ժողովրդի մեջ առավել փառաբանված էին Մամիկոնյանները:

39. «Տարոնի Արծիվ», 1938թ., թիվ 2, էջ 43:

40. Նույնը, 1939թ., թիվ 9, էջ 29:

41. Նույնը, 1938թ., թիվ 5-6, էջ 59:

42. Նույնը, 1939թ., թիվ 12, էջ 5-6:

43. «Տարոնի Արծիվ», Նյու Յորք 1942թ., թիվ 18, էջ 3:

44. Հ. Ասատրյան, «Հայաստան - Արիական նախադիրք Առաջա-վոր Ասիայում», Սոֆիա 1942թ., էջ 285:

45. «Տարոնի Արծիվ», 1939թ., թիվ 9, էջ 32:

46. Նույնը, թիվ 2, 1938թ., էջ 34:

47. Նույնը, թիվ 12, 1939թ., էջ 7:

48. Նույնը, թիվ 1, 1938թ., էջ 17:

ՀԱՅԿ ԱՍԱՏՐՅԱՆ (1)

(կենսագրական ակնարկ)

«Իբրեւ գիտության եւ տեսական խղճմտանքի մարդ՝ [դոկտ. Հայկ Ասատրյանը] իր խոսքը ծառայեցրել է ճշմարտության, իսկ փրկարար ճշմարտությունը՝ իր անիրավված ժողովրդին»:

Գ. Նժդեհ

Մեր դարի 30-ական թվականների Հայկական ցեղային շարժման գաղափարական գործիչների մեջ, իր հզոր իմացականությամբ եւ վառ արտահայտված անհատականությամբ առանձնանում է Հայկ Ասատրյանը, «Նժդեհի գլխավոր՝ գուցե եւ միակ խորհրդատուն» (2), որին Կարո Գեւորգյանը բնորոշում է՝ «գիտական մտապաշարով հարուստ եւ իր փիլիսոփայատիպ խառնվածքով հանրածանոթ...» (3):

Հայկ Ասատրյանը ծնվել է 1900թ. փետրվարի 5-ին, Ալաշկերտի գավառի Երից գյուղում (4): Արմատները Տարոնից են: 8 տարեկանում կորցնում է հորը (հայրը՝ Կիրակոսը, գյուղապետն էր), եւ քրոջ ու եղբոր հետ մնում է մոր խնամքին:

Նախնական կրթությունը ստացել է տեղի վարժարանում, որն ավարտելուց հետո մտնում է Հ.Յ.Դ. Աշակերտական միության շարքերը: Այնուհետեւ, ուսումը շարունակում է Երեւանի թեմական դպրոցում: Հայաստանի Հանրապետության օրերին, Հայկ Ասատրյանը՝ որպես պատգամավոր Աշակերտական կազմակերպությունից, մասնակցում է Հ.Յ.Դ. 9-րդ Ընդհանուր ժողովին: 1918-1919 թվականներին, նրա խմբագրությամբ, Երեւանում լույս է տեսնում Հ.Յ.Դ. Աշակերտական միության օրգան «Շանթ» թերթը (5):

Իր մասնակցությունն է բերում 1921թ. փետրվարյան ապստամբությանը, որի ճնշումից հետո, ձերբակալությունից խուսափելու համար, ստիպված, հրաժեշտ տալով հարազատներին, անցնում է Թավրիզ (այստեղ ստանում է պարսկահպատակի անձնագիր): Շատ չանցած, Թավրիզ է գալիս նաեւ Գ. Նժդեհը եւ միասին անցնում են Եվրոպա: Եվրոպայում նա ուսանում է նախ Բեռլինի բարձրագույն քաղաքական դպրոցում, ապա՝ Պրագայի համալսարանի փիլիսոփայության բաժնում, որն ավարտում է 1930թ.-ին՝ ստանալով դոկտորի աստիճան: Իր հետ ուսանած Անդրե

Ամուրյանը հետագայում հիշում էր. «Հայկ մեծ եռանդով նվիրվեցավ փիլիսոփայության ճյուղին: Կարդալու եւ պարապելու հետաքրքրական եւ ինքնօրինակ կերպ մը ուներ: Նախ՝ վերարկուն երբեք չէր հագներ, այլ՝ կնետեր ուսերուն: Հաճախ կնստեր հատակին ու Նիցշեի եւ կամ Կանտի գիրքը առջեւ դրած՝ կկարդար եղանակով, ճիշտ դերվիշի տպաւորություն ձգելով: Արդեն կենցաղով ալ Հայկը դերվիշ էր, աննյութասեր, կյանքի հաճույքներուն վրա քամահրանքով նայող. կատեր սուտն ու կեղծիքը, շողոքորթությունն ու քծնանքը, մարդոց թերությունները կըսեր իրենց ճակտին» (6):

Ուշագրավ են Ասատրյանին նվիրված հիշողություններում Բուլղարիայի նրա կուսակիցներից Կարո Մեհյանի (որ հանդես է գալիս «Սօսեաց տղան» ծածկանունով)՝ իր իմացականությունը բնորոշող վկայությունները: *«Մղված իր սերեն, ինչպես եւ նպաստավորված իր արտակարգ հիշողութենեն, ան (իմա՛ Հ. Ասատրյանը,- Մ. Լ.) ուսումնասիրած էր Հայաստանի աշխարհագրությունը մանրամասնորեն: Հայերեն թե օտար լեզուներով գրված բոլոր գործերը, որոնք կխոսին մեր երկրի մասին, ծանոթ էին անոր: Նաեւ մեր մատենագրության մեջ չկար տող մը, որուն վրա ան տքնած չըլլար: Նարեկացիեն երկար հատվածներ կարտասաներ գոց: Իսկ առհասարակ հայերեն լեզուն ան իրեն համար վերածած էր տեսակ մը մասնագիտության: Տեւապես «կխուզարկեր» բառերը, կբաղդատեր օտար բառերու հետ ու չէր հանդարտեր, մինչեւ որ չլուծեր անոնց ծագման կամ արմատի հանգույցը: Սեղմ՝ իր մտածումներուն մեջ եւ ատկե՝ քիչ մը «թանձր» արտահայտվելու իր ձեւով, Հ. Ասատրյան հարկադրվա՞ծ կըլլար, թե՞ կնախասիրեր նոր բառեր կերտել: Իր փոքրաթիվ գրքերուն եւ բազմաթիվ հոդվածներուն մեջ ունի մեծ թիվով բառեր, որոնք «իրն» են, եւ զորս կարժե «լույսին բերել», տրված ըլլալով որ անոնցմե շատերը արտահայտիչ են, հեշտալուր եւ մեր լեզվին օրենքներուն համապատասխան: Որովհետեւ այս «դերվիշը» ո՛չ միայն հասկացողություն եւ հմտություն, այլե՛ւ ճաշակ ուներ: Ճաշակ՝ ամեն բանի մեջ ու գեղեցկագիտական ըմբռնումով»* (7):

Այնուհետեւ, Հ. Ասատրյանը անցնում է Բուլղարիա, ուր մնում է Գ. Նժդեհի մոտ եւ գործում նրա հետ: Բուլղարիայի հետ է կապված նրա ազգային-քաղաքական գործունեության ամենաբեղուն եւ եռանդուն շրջանը: Հ. Ասատրյանը ուսուցչություն էր անում Սոֆիայի Գեւորգ Մեսրոպ ճեմարանում եւ, միաժամանակ, Հ.Յ.Դ. տեղի ԿԿ-ի քարտուղարն էր:

Հ. Ասատրյանը եղավ Նժդեհի ամենամոտ գործակիցը՝ 30-ական թվականների Հայկական ցեղային շարժումը ծավալելու եւ հիմնավորելու գործում: «...Հայկը աջ բազուկն էր Նժդեհին, երբ «Ցեղակրոնություն» գաղափարաբանությունը կխմբագրեր» (8): Հ. Ասատրյանը խորապես

ընկալեց Նժդեհի ուսմունքը եւ, մի տեսակ, մեկնիչ (թերեւս չգերազանցված) հանդիսացավ նրա գաղափարների: Վերջինիս երկու մենագրությունների՝ «Ցեղի ոգու շարժը», «Ամերիկահայությունը - Ցեղը եւ իր տականքը» վերաբերյալ Հ. Ասատրյանի մեկնաբանություններն ու խորհրդածությունները լավագույնս ա՛յդ են վկայում:

1932թ.-ին, Սոֆիայում, Հ. Ասատրյանի նախաձեռնությամբ եւ խմբագրությամբ լույս է տեսնում «Խռովք» իմաստասիրական-գիտական ամսագիրը, որը, սակայն, կուսակցության կողմից աջակցություն չի ստանում եւ փակվում է: 1935թ.-ից, Բուլղարիայի Հ.Յ.Դ. ԿԿ-ի ներսում ունեցած տարաձայնությունների պատճառով, կուսակցության հետ իր կապերը փաստացիորեն խզում է: Դրանից հետո, 1936թ.-ին, կրկին Սոֆիայում, Ներսես Աստվածատուրյանի (9) հետ լույս են ընծայում «Ցեղ եւ Հայրենիք» կիսամսյան, որը նույնպես երկար կյանք չի ունենում:

1937թ.-ին, Հ. Ասատրյանը պաշտոնապես, Հ.Յ.Դ. Բյուրոյի կողմից հեռացվել է կուսակցությունից (10): Ի դեպ, Ասատրյանը Հ.Յ.Դ.-ից հեռացվել է մի փոքր շուտ, քան Նժդեհը, եւ ոչ առանց հիմքի. այս կապակցությամբ, «Ամրոցը», իր 1937թ.-ի թիվ 20-ի խմբագրականում Հայկին համարում էր քավության նոխազ Նժդեհի «մեղքերին»:

Մեզ հայտնի են 1933թ.-ին Սոֆիայում հրատարակված նրա երկու գրքույկները՝ **«Ցեղանենգ շեյթանը»** եւ **«Մտածումներ հայկական ճգնաժամի, Հայ հեղափոխության եւ Մայիս 28-ի մասին»**:

1937թ.-ից, Նժդեհի հետ հիմնում եւ մինչեւ 1944թ.-ը հրատարակում են «Ռազմիկ» հասարակական-քաղաքական կիսաշաբաթաթերթը, որը, փաստորեն, Բուլղարիայի Ցեղակրոն կազմակերպության թերթն էր: Խմբագիրը, որոշ ընդմիջումներով, Հայկ Ասատրյանն էր:

Եղել է Տարոնական շարժման հիմնադիրներից ու գաղափարախոսներից մեկը եւ 1938-1939թթ.-ին, Ն. Աստվածատուրյանի հետ խմբագրել է Սոֆիայում հրատարակվող «Տարոնի Արծիվ»-ը, որը Տարոն-Տուրուբերանի Հայրենակցական Միության պաշտոնաթերթն էր:

1942թ.-ին Հ. Ասատրյանն ավարտում է Հայկական հարցին եւ արժեքներին նվիրված իր **«Հայաստան - Արիական նախադիրք Առաջաւոր Ասիայում»** գրքի Ա մասը (գրքի առաջաբանը գրել է Գ. Նժդեհը) եւ շտապ մեկնում Բեռլին՝ դա գերմաներեն թարգմանել տալու եւ անմիջապես հրատարակելու համար: Այդ գործի կարեւորությունը պայմանավորված էր նրանով, որ մի շարք եւրոպացի գիտնականներ սխալ տեղեկություններ էին տվել Հայ ցեղի ծագման մասին (կասկածի տակ էր դրվում հայերի արիական ծագումը), եւ այս ապատեղեկատվության հիման վրա նացիստական կուսակցության մեջ ձեւավորվել էր մի թեւ՝ Ռոզենբերգի ղեկավարությամբ, որն հայերին վերագրում էր սեմական ծագում:

Վտանգի տակ էր գերմանական տիրապետության տարածքում բնակվող շուրջ 400 հազար հայերի գոյությունը: Հետեւաբար, անհրաժեշտ էր գործնական ու գիտական-քարոզչական միջոցներով վերացնել այդ վտանգը:

Կապված Հ. Ասատրյանի Բեռլին մեկնելու հետ, 1943թ.-ի սկզբին Գ. Նժդեհի կողմից Բուլղարիա է հրավիրվում Կարո Գեւորգյանը (որը Սալոնիկում 1928-1937թթ.-ին խմբագրում էր «Հորիզոն» թերթը ու եղել է տեղի Ցեղակրոն Ուխտերի ղեկավարը), որն առժամանակ խմբագրում է «Ռազմիկը»:

1943թ. վերջին Հ. Ասատրյանը վերադառնում է Բուլղարիա եւ կրկին անցնում «Ռազմիկ» թերթի խմբագրության գործին, ինչպես նաեւ ավարտում իր գրքի Բ մասը, որը սակայն լույս չի տեսնում:

Երբ 1944թ.-ին համայնավարները գրավեցին Բուլղարիան, իրար ետեւից ձերբակալվեցին Գ. Նժդեհը, Հ. Ասատրյանը (ձերբակալվել է 1945 թ. հունվարի 27-ին) եւ Ն. Աստվածատուրյանը: Հ. Ասատրյանը, դատապարտվելով 10 տարվա ազատազրկման, նախ ուղարկվում է Քիշինեւի, այնուհետեւ՝ Ուրալի բանտը, ուր գտնվում էր նաեւ Ն. Աստվածատուրյանը: Վերջինս կարճ ժամանակ անց մահանում է: Իր սիրելի ընկերոջ մահվան լուրը Ասատրյանն առնում է անկողնում ծանր հիվանդ պառկած եւ հազիվ կարողանում է տեսնել միայն նրա դիակը՝ բանտից դուրս հանելիս:

1952թ. Ասատրյանին Ուրալից փորձում են տեղափոխել Երեւան (Նժդեհի մոտ)՝ Դաշնակցության եւ Թուրքիայի հետ կապված խնդիրներում օգտագործելու համար: Սակայն, իր առողջական ծանր վիճակի պատճառով, դա տեղի չի ունենում:

Հ. Ասատրյանի ձերբակալումից հետո հալածվում են նաեւ նրա ընտանիքի անդամները. կնոջն ու երկու աղջիկներին (Հեղինե և Արածանի) աքսորում են Պավլիկենի քաղաքը, ուր աքսորվել էր նաեւ Նժդեհի ընտանիքը: Նրանց ստիպում են ամեն առավոտ ու երեկո ստորագրություններ տալ՝ ներկայության համար, իսկ տիկնոջը նույնիսկ արգելում են աշխատել: 1947թ.-ին, Ասատրյանի կինը (Սիրանուշ Խանջիկյան) Չեկայի կողմից ստանում է կեղծ երկտող՝ իր ամուսնու մահվան մասին, որից հետո նրան խրատում են ամուսնանալ, քանզի հակառակ դեպքում, աշխատանքի իրավունք չի ունենա եւ կդիտվի որպես հակակառավարական անձ: 1951թ.-ին տիկին Ասատրյանը ամուսնանում է մի բուլղարացու հետ, այդպես փորձելով պահել իր երկու աղջիկներին:

1955թ.-ին, ընդհանուր ներման շնորհիվ ազատվելով բանտից, Հ. Ասատրյանը, ծանր հիվանդ վիճակում վերադառնում է Սոֆիա եւ ցավով իմանում իր ընտանիքի ու հատկապես կնոջ նկատմամբ՝ Չեկայի խարդավանքների մասին: Սակայն, ստիպված է լինում հաշտվել իրականության

հետ եւ մնում է իր մեծ աղջկա՝ Հեղինեի մոտ (ի դեպ,Հեղինեի կնքահայրը Նժդեհն էր):

Սարգիս Սարունու վկայությամբ, բանտարկության տարիներին *«թերթի լուսանցքներում վրա, Հայկ գրած էր ընդարձակ դյուցազներգություն մը, որով կուտար հայ ժողովուրդին ամբողջ պատմությունը, սկիզբեն մինչեւ մեր օրերը»* (11), որը, ցավոք, կորել է: Ասատրյանի՝ աքսորի վերջին տարիներին գրած անավարտ, «հանգավոր մեկ վեպի» մասին է վկայում նաեւ նրա բանտակից Կարո Մեհյանը (12):

1956թ. հունվարի 13-ին, Հայկ Ասատրյանը վախճանվում է սրտի կաթվածից: Մահվան պահին, երկինք նայելով, երեք անգամ բացականչում է. *«Ա՜խ, Հայաստա՜ն...»*:

Այսպես է ընդհատվում ցեղադրոշմ կյանքը հայաշունչ մտավորականի, որի դեռեւս քիչ հայտնի տեսական ժառանգությունը կգա անշուշտ լրացնելու հայ, թերեւս ոչ այնքան հարուստ, ազգային-իմաստասիրական միտքը:

Ծանոթագրություններ

1. Տեղեկությունների մի մասը քաղել ենք Ավոյի «Տոքթ. Հայկ Ասատրեան» հոդվածից, զետեղված «Հեղափոխական Ալբոմ»-ի (Բեյրութ) 1971 թ.-ի թիվ 11-ում:

2. Ավո, «Նժդեհ», էջ 457:

3. «Հայրենիք» օրաթերթ, Բոստոն 1957թ., 11 օգոստոսի, էջ 3:

4. Ասատրյանի հարցաքննության արձանագրությունից արված քաղվածքում իբրեւ ծննդավայր նշված է Թավրիզը (ՀՀ ԱԱՆ արխիվ, ԿԳՖ, գործ թիվ 11278, հտ. 3): Սակայն իր քննչական գործի հիման վրա գրված տեղեկանքում որպես ծննդավայր բերված է Ալաշկերտի շրջանի Երից գյուղը («Гарегин Нжде и КГБ», Ер. 2001, ст. 82): Կարծում ենք, իբրեւ ծննդավայր Թավրիզի նշումը շփոթմունք է՝ կապված իր պարսկահպատակ լինելու հետ: Հ. Ասատրյանի պարսկահպատակ լինելու մասին է վկայում նաեւ Կարո Մեհյանը (տե՛ս «Հայրենիք» ամսագիր, Բոստոն 1958թ., թիվ 5, էջ 83):

5. Գ. Լեւոնյան «Հայոց պարբերական մամուլը», Երեւան, 1934թ., էջ 94: Մեզ հայտնի են «Շանթ»-ի 1919թ.-ի (Բ. տարվա) թիվ 1,2,4-7, 9 համարները:

6. «Հեղափոխական ալբոմ», թիվ 11, 1971թ., էջ 286:

7. «Հայրենիք» ամսագիր, 1958 թ., թիվ 5, էջ 81:

8. «Հեղափոխական ալբոմ», թիվ 11, 1971թ., էջ 291:

9. ***Ներսես Աստվածատուրյանը*** *30-ական թվականների հայկական ցեղային-վերանորոգչական շարժման գործուն մասնակիցներից է, Ցեղակրոն եւ Տարոնական շարժումների սյուներից:*

Ծնվել է Սկյուտարում (Կ.Պոլիս), ծագումով տարոնցի է: Եղել է Հ.Յ.Դ. անդամ, Հ.Յ.Դ.-ի հովանավորած Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միության Բուլղարիայի շրջանի պատասխանատու գործիչներից: Վարել է առեւտրական լայն գործունեություն՝ նյութական զգալի օժանդակություն բերելով ազգային-հասարակական կյանքին: Նրա մասին Կ. Գեւորգյանը գրում է. «Բուլղարահայ բոլոր խավերեն սիրված, ազնվական խառնվածքի մարմնացում, անձնվեր ու հայրենապաշտ..., որի համար իր առեւտրական փայլուն գործեն շատ ավելի կենսական էին մեր ազգային-քաղաքական շահերը եւ որի մոտ այնքան նրբորեն բյուրեղացած էին հայրենասիրական զգացումներն ու ըմբռնումները» («Հայրենիք» օրաթերթ, Բոստոն 1957թ., 11 օգոստոսի, էջ 3):

Հ. Ասատրյանի հետ, Սոֆիայում խմբագրել ու հրատարակել են «Ցեղ եւ Հայրենիքն» ու «Տարոնի Արծիվը»: 1944թ.-ին ձերբակալվել է համայնավարների կողմից եւ տարվել Ուրալի բանտ, ուր եւ մահացել է:

Իր մասին մեզ հայտնի շատ թե քիչ խոսուն գրությունը տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1958 թ., թիվ 7, էջ 107-109:

10. ՀՀ ԱԱՆ արխիվ, ԿԳՖ, գործ թիվ 11278, հտ. 3: Կարո Գեւորգյանը, Հայկ Ասատրյանի մահագրության մեջ եւս, նրան հիշատակում է՝ իբրեւ նախկին դաշնակցականի (Կ. Գեւորգյան, «Ամենուն տարեգիրքը», Բեյրութ 1957թ., էջ 642):

11. «Հեղափոխական ալբոմ», թիվ 11, 1971թ., էջ 291:

12. «Հայրենիք» ամսագիր, 1958թ., թիվ 5, էջ 83: